



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 օգոստոսի 2025 թվական

ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահին փոխարինող Քրիստինե Մկոյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՀԿԴ/0199/02/25 (ՎԴ/10691/05/25) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի օգոստոսի 1-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

Գործի դատավարական նախապատմությունը.

1. «datalex.am» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ հակակոռուպցիոն դատարան ընդդեմ «Լոկալ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին:

2. ՀՀ հակակոռուպցիոն դատարանը, պատճառաբանելով, որ «անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջով հայցադիմում ներկայացնելու փաստերի ուժով ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի և «Հոկալ Դիվելոփերզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև ծագել է վարչական իրավահարաբերություն, որի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ենթակա է ՀՀ վարչական դատարանին», 2025 թվականի մայիսի 14-ի որոշմամբ նշված հայցադիմումի ընդունումը մերժել է՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

3. ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը, պատճառաբանելով, որ «Դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին և կետը, որը պետք է կիրառեր, իսկ վերաքննիչ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների շրջանակներում ներկայացված փաստարկները հիմք չեն տալիս արձանագրելու, որ Դատարանի կողմից թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել գործի սխալ լուծման: Հետևաբար՝ վերաքննիչ բողոքը հիմնավորված չէ և ենթակա է մերժման», 2025 թվականի հունիսի 26-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության վերաքննիչ բողոքը մերժել է, և ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի մայիսի 14-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

4. Դրանից հետո ՀՀ գլխավոր դատախազությունը 2025 թվականի հուլիսի 4-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Ընկերության՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին:

5. ՀՀ վարչական դատարանի 2025 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

6. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով գործն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

7. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի օգոստոսի 4-ին:

Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 10-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերին, 65-րդ, 77-րդ, 78-րդ հոդվածներին և 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0823/05/14, 2024 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/3859/02/17 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) հայցով ներկայացված պահանջը վերաբերում է օրենսդրությամբ նախատեսված՝ մասնավորեցման գործարքի պայմանը չկատարելու արդյունքում գնորդին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա բռնագանձում տարածելուն, և տվյալ իրավահարաբերությունն ունի մասնավոր՝ քաղաքացիաիրավական բնույթ, քանի որ կարգավորվում է մասնավոր իրավունքի նորմերով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (171-հոդված, 279-րդ հոդվածի 3-րդ մաս) և օրենսդրությամբ հիմնված է մասնավոր ինքնավարության սկզբունքի վրա և կողմերից ոչ մեկը, թեև դրանցից մեկը եղել է վարչական մարմին, մյուսի հանդեպ հանդես չի եկել հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի դերում, այն էլ՝ գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Կնքելով քաղաքացիաիրավական պայմանագիր՝ երկու կողմն էլ հանդես են եկել որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների լիիրավ սուբյեկտներ և արտահայտել են իրենց կամքը և կնքված պայմանագրով ազատորեն սահմանել են իրենց իրավունքները և պարտականությունները, որոշել են պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող պայմանները:

Նշված պայմանագրի կողմ հանդիսացող վարչական մարմինն իրավունք չունի և չէր էլ կարող և ոչ էլ պարտադրել է իր կամքը պայմանագրի կողմ հանդիսացող մյուս

սուբյեկտին, որպիսի պարագայում վերջիններիս մոտ առաջացել են քաղաքացիական, այլ ոչ թե հանրային բնույթի իրավահարաբերություններ:

Սույն գործի՝ վարչական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հանգամանքը հաստատվում է նաև նրանով, որ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման արդյունքում գույքի վրա բռնագանձում տարածելը ոչ թե անձին պատասխանատվության ենթարկելու միջոց է, այսինքն՝ ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված կարգով ուղղված է ֆիզիկական անձին որոշակի իրավունքներից զրկելուն, այլ պայմանագրային պարտավորությունների խախտման կապակցությամբ առաջացած իրավական հետևանք է:

Սույն դեպքում վեճը ծագել է վարչական մարմնի՝ որպես վաճառողի և իրավաբանական անձի՝ որպես գնորդի միջև: Վեճը բխում է կողմերի միջև կնքված առուվաճառքի պայմանագրից և պայմանագրի՝ օրենքով նախատեսված ենթադրյալ պայմանից: Այսինքն՝ Դատարան հայց ներկայացնելիս համապատասխան մարմինը հանդես է եկել որպես քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակից, ում պահանջն ուղղված է քաղաքացիական դատավարության կարգով անձի սեփականության իրավունքի դադարեցմանը՝ գույքի բռնագանձման եղանակով: Այլ կերպ ասած՝ պայմանագրի մաս հանդիսացող պայմանի հիմքով անձին սեփականության իրավունքով պարկանող գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջը դուրս է վարչարարության շրջանակներից, ոչ թե ենթադրում է վարչական մարմնի գործադիր կարգադրիչ գործունեություն, այլ պայմանագրի մաս հանդիսացող պայմանի հիմքով սեփականագրկում:

(...)

պետական գույքի նկատմամբ պետությանը պարկանող սեփականության իրավունքի՝ մասնավոր սուբյեկտին փոխանցելու արդյունքում կողմերի միջև ծագել են քաղաքացիական իրավահարաբերություններ՝ հաշվի առնելով իրավահարաբերությունների բովանդակությունն ու օբյեկտը, հետևաբար օրենսդրությամբ նախատեսված՝ մասնավորեցման գործարքի պայմանը չկատարելու արդյունքում գնորդին սեփականության իրավունքով պարկանող գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին վեճը ՀՀ «Դատական օրենսգիրք» ՀՀ

սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ընդդադրյա է հակակոռուպցիոն դատարանին:

(...)

անկախ այն հանգամանքից, որ հայցվորը հանդիսանում է հանրային իշխանական լիազորություններով օժտված վարչական մարմին և կիրառելի իրավական նորմերի մի մասը հանրային է, միևնույն է, այն դեպքերում, երբ հայցի հիմքը պայմանագրային պարտավորությունների չկատարումն է, դատախազության կողմից քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցը ներկայացվում է ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով և դա ընդդադրյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին¹:

9. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասին, 125-րդ հոդվածի 1-ին մասին և 126-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 13-ի թիվ ԱՐԴ/0062/02/09 ու 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԵԱԴԴ/0913/02/13 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին և պատճառաբանելով, որ «(...) տվյալ դեպքում առկա է ՀՀ գլխավոր դատախազության՝ ընդդեմ «ԼՈԿԱԼ ԴԻՎԵԼՈՓԸՐԶ» ՍՊԸ-ի՝ «ԼՈԿԱԼ ԴԻՎԵԼՈՓԸՐԶ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Աբովյան 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա քոնազանձում տարածելու պահանջի վերաբերյալ՝ 2025 թվականի ապրիլի 15-ի՝ թիվ ՀԿԴ/0111/02/25 քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից կայացված «Հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում, որով ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից՝ որոշումը թողնելով օրինական ուժի մեջ: Այսինքն՝ վերոգրյալ կարգավորումների լույսի ներքո առկա է սույն հայցադիմումի վարույթ ընդունելը մերժելու հիմք՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի և 126-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կարգավորումների ուժով», ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ գտել է, որ «հաշվի առնելով, որ

¹ Տե՛ս դատական գործը, հատոր 1-ին, թերթեր 121-134:

Վարչական դատարանն իր հերթին համաձայն չէ ենթակայության հետ կապված հարցին, Դատարանի գնահատմամբ առկա է արդար դատաքնության իրավունքը ապահովելու հրամայական, որպիսի պայմաններում Դատարանը սույն դեպքում պարտավոր է իրացնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու լիազորությունը՝ ենթակայության հարցը լուծելու համար: Վերոգրյալը հաշվի առնելով անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0199/02/25 քաղաքացիական գործն ուղարկել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ ենթակայությունը որոշելու նպատակով»²:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

10. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ո՞վ է հանդիսանում թիվ ՀԿԴ/0199/02/25 (ՎԴ/10691/05/25) գործով ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայցի ընդդեմ Ընկերության՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, իրավասու դատարան:

11. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մասնագիտացված դատարաններն են՝

1) վարչական դատարանը.

(...)

3) հակակոռուպցիոն դատարանը»:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

(...)

² Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 3-5:

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավագոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին ընդդադյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդադյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:

12. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել «Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝

արձանագրելով հետևյալը. «(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (...) Հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (...):»³:

12.1. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ Գոռիշխան Իշիկյանն ընդդեմ «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ արձանագրել է. «[Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը

³ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ «Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, (...)»⁴:

12.2. Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով վերը նշված դիրքորոշումները՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով իրավահարաբերության բնույթը պարզելու նպատակով կիրառվելիք մեխանիզմներին, *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի քաղաքացիական գործով* 2022 թվականի մայիսի 13-ի որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «*Իրավահարաբերության բնույթը պարզելու համար հարկավոր է այն դիտարկել շահերի տեսության, ենթակարգության տեսության և հատուկ իրավունքի տեսության համադրությամբ*»:

Ըստ շահերի տեսության՝ հանրային իրավունքը մասնավորից տարբերվում է այն շահի տեսակով, որոնք պաշտպանվում են առանձին իրավանորմով: Այն իրավանորմերը, որոնք ծառայում են հանրային կամ ընդհանուր շահին, պատկանում են հանրային իրավունքին: Մինչդեռ, մասնավոր իրավանորմերը ծառայում են մասնավոր կամ անհատական շահերին:

⁴ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոփսիմե Իշիկյանի քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշումը:

Ենթակարգության տեսությունը ելնում է մասնակիցների հարաբերությունների բնույթից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարաբերության մասնակիցներն են մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից քաղաքացին: Ըստ այս տեսության՝ այն իրավանորմերը, որոնք կարգավորում են հանրային իշխանությունը կրողների գործողությունները, համարվում են հանրային-իրավական, երբ դրանք վերաբերում են վերադասության-ենթակայության հարաբերությանը: Եթե մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն, ապա իրավահարաբերությունը հանրային է, իսկ եթե իրավունքի երկու սուբյեկտները միմյանց առջև հանդես են գալիս իրավահավասար կերպով, ապա առկա են մասնավոր-իրավական հարաբերություններ:

Հատուկ իրավունքի տեսությունն իր հերթին նույնպես կոչված է պարզելու վեճի հանրային-իրավական բնույթը: Այն ելնում է վեճը լուծող իրավանորմերի իրավական բնույթից: Ըստ այս տեսության՝ եթե վեճը լուծվում է հանրային-իրավական նորմերի միջոցով, ապա առկա է հանրային-իրավական վեճ, իսկ եթե վեճը լուծվում են մասնավոր-իրավական նորմերը, ապա կունենանք մասնավոր-իրավական վեճ:

Վերոնշյալ տեսությունների հիմքում դրված չափանիշներից ելնելով՝ անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

- որ նորմերն են լուծում վեճը,
- արդյո՞ք դրանք հանրային-իրավական նորմեր են (ինչ շահերի պաշտպանությանն են ուղղված այդ նորմերը),
- արդյո՞ք իրավահարաբերության մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն»⁵:

13. Սույն որոշման 11-12.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

⁵ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի* քաղաքացիական գործով 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 որոշումը:

Ընդ որում, իրավահարաբերությունը հանրային որակելու համար անհրաժեշտ է բացահայտել իրավահարաբերության տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը, բովանդակությունը:

14. Սույն գործով կատարված ուսումնասիրությունից հետևում է, որ.

- «datalex.am» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ հակակոռուպցիոն դատարան ընդդեմ Ընկերության՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին:

- ՀՀ հակակոռուպցիոն դատարանը վերը նշված պատճառաբանությամբ 2025 թվականի մայիսի 14-ի որոշմամբ նշված հայցադիմումի ընդունումը մերժել է՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

- ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը վերը նշված պատճառաբանությամբ 2025 թվականի հունիսի 26-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության վերաքննիչ բոլորը մերժել է, և ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի մայիսի 14-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

- Դրանից հետո ՀՀ գլխավոր դատախազությունը 2025 թվականի հուլիսի 4-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Ընկերության՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին:

- ՀՀ վարչական դատարանի 2025 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

- ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի օգոստոսի 1-ին որոշում է կայացրել վերը նշված պատճառաբանությամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով գործը ՀՀ վճռաբեկ դատարան ուղարկելու մասին:

15. Ազգային ժողովի կողմից 07.02.2024 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածը (*«Ընդդատության և ենթակայության մասին վեճերը»*) շարադրվել է համապատասխան խմբագրությամբ, որի արդյունքում

Հակակոռուպցիոն դատարանին իրավունք է վերապահվել յոթնօրյա ժամկետում որոշում կայացնելու դատարանից ըստ ենթակայության ստացած գործը վարույթ ընդունելու կամ այն Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Իր հերթին, Վճռաբեկ դատարանի նախագահին և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահներին լիազորություն է վերապահվել գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշելու գործի ենթակայությունը, որպիսի կարգով որոշված դատարանը համարվելու է իրավասու դատարան: Ավելին, նախատեսվել է նաև, որ գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում այլևս չի կարող վերաքննիչ բողոք բերվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի (*ստորադաս դատարանում առկա է եղել գործի վարույթը կարճելու հիմք*) հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Հիմք ընդունելով վերը նշված օրենսդրական փոփոխությունների էությունը և բովանդակությունը, նշված օրենքի նախագիծն ընդունելու հիմնավորումը, որում որպես այդ փոփոխություններն ու լրացումներն ընդունելու անհրաժեշտություն նշվել է **հենց Վճռաբեկ դատարանի կողմից գործերի ենթակայության և ընդդատության հարցերի կանոնակարգման վերաբերյալ համապատասխան իրավակարգավորումներ նախատեսելու անհրաժեշտությունը՝** այդ լիազորությունը տվյալ դեպքում վերապահելով հենց Վճռաբեկ դատարանի նախագահին և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահներին՝ անգամ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի մայիսի 14-ի որոշման առկայության պայմաններում, որով մերժվել է վերը նշված հայցադիմումի ընդունումը, իսկ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի հունիսի 26-ի որոշմամբ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի մայիսի 14-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ, ցանկանալով գործնականում ապահովել օրենսդրի վերը նշված կամքը, իսկ դրա արդյունքում՝ այն իրագործելու նպատակով տրված լիազորության պատշաճ իրականացումը՝ արձանագրում ենք հետևյալը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է նաև, որ.

- Պետական գույքի կառավարման վարչության և Ընկերության միջև նաև Կառավարության 2007 թվականի ապրիլի 5-ի թիվ 421-Ա որոշման հիմքով 2007 թվականի մայիսի 23-ին կնքվել է «Պետական գույքի օտարման և գրավի» թիվ 406-Օ պայմանագիրը, որով Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքն օտարվել է Ընկերությանը՝ 166.318.000 ՀՀ դրամի դիմաց: Նշված պայմանագրի շրջանակներում Ընկերությունը պարտավորվել է պայմանագիրն ուժի մեջ մտնելու (2007 թվականի մայիսի 23-ի) պահից 2 տարվա ընթացքում գույքի հիմնական վերանորոգման և վերականգնման համար կատարել ներդրում՝ 150.000.000 ՀՀ դրամի չափով: Ընդ որում, նշված պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վաճառողին իրավունք է վերապահվել պայմանագրի առարկա գույքը բռնագանձելու պահանջով դիմել դատարան,

- ՀՀ գլխավոր դատախազությունը 2025 թվականի հուլիսի 4-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Ընկերության՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին⁶,

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի 2025 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ վերահասցեագրվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ պետական գույքի նկատմամբ պետության սեփականության իրավունքը մասնավոր սուբյեկտին փոխանցելու արդյունքում կողմերի միջև ծագել են քաղաքացիական իրավահարաբերություններ՝ հաշվի առնելով իրավահարաբերությունների բովանդակությունն ու օբյեկտը, հետևաբար՝ մասնավորեցման գործարքի պայմանը չկատարելու արդյունքում գնորդին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին վեճն ընդդատյա է հակակոռուպցիոն դատարանին⁷,

- ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ եզրահանգել է, որ տվյալ դեպքում թիվ ՀԿԴ/0111/02/25 քաղաքացիական գործով միևնույն պահանջի վերաբերյալ առկա է 2025 թվականի ապրիլի 15-ի ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից կայացված «Հայցադիմումը վարույթ ընդունելը

⁶ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

⁷ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

մերժելու մասին» որոշում, որով ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից՝ որոշումը թողնելով օրինական ուժի մեջ: Այսինքն՝ առկա է սույն հայցադիմումի վարույթ ընդունելը մերժելու հիմք՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի և 126-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կարգավորումների ուժով: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ Վարչական դատարանն իր հերթին համաձայն չէ ենթակայության հետ կապված հարցին, առկա է արդար դատաքննության իրավունքն ապահովելու հրամայական, որպիսի պայմաններում անհրաժեշտ է իրացնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու լիազորությունը՝ ենթակայության հարցը լուծելու համար⁸:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է փաստել, որ սույն գործով հայցի առարկան Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջն է, իսկ հայցի հիմքը՝ Ընկերության՝ որպես գնորդի կողմից պայմանագրային պարտավորությունը չկատարելու արդյունքում, համապատասխանաբար, վաճառողի՝ նման պարտավորության կատարում ստանալու իրավունքի ենթադրյալ խախտումը:

Այսինքն՝ նշված իրավահարաբերությունում կողմերից մեկը՝ ՀՀ գլխավոր դատախազությունը, թեկուզև հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, սակայն տվյալ իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը: Մասնավորապես՝ ներկայացված հայցադիմումի բովանդակությունից հետևում է, որ տվյալ դեպքում վեճը վերաբերում է անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելուն՝ ըստ էության այն հիմքով, որ Ընկերությունը «Պետական գույքի օտարման և գրավի» թիվ 406-Օ պայմանագրի շրջանակներում պարտավորվել է կատարել համապատասխան ներդրում, մինչդեռ չի կատարել, և միննույն ժամանակ պայմանագրով նախատեսված է եղել նշված

⁸ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

պարտավորությունը չկատարելու պայմաններում սույն գործով ներկայացված պահանջով դատարան դիմելու հնարավորություն:

18. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատախազը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցում է հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական (համայնքային) շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել (...):»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝

1) քաղաքացիական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

2) վարչական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը. (...):»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...):»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա (...) դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (...):»:

19. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից բխում է, որ դատախազն օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմնի կողմից հայց չներկայացնելու դեպքում իրավասու է նաև քաղաքացիական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայց հարուցել դատարան: Ընդ որում, քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցով պահանջը ենթակա է քննության հակակոռուպցիոն դատարանում: Այսինքն՝ այն պայմաններում, երբ դատախազը պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության լիազորության իրացման շրջանակներում հանդես է գալիս որպես հայցվոր, կարևոր է հայցի առարկայի, իրավական և փաստական հիմքերի համադրման արդյունքում բացահայտել վեճի առարկա իրավահարաբերության էությունն ու բնույթը՝ հայցը քաղաքացիական դատավարության կարգով, նման պայմաններում՝ հակակոռուպցիոն դատարանում քննության ենթակա լինելու հարցը պարզելու տեսանկյունից:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ ՀՀ գլխավոր դատախազությունը 2025 թվականի ապրիլի 8-ին Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին հասցեագրված գրությամբ առաջարկել է հայց ներկայացնել դատարան, որին ի պատասխան՝ վերջինս առաջարկել է ՀՀ գլխավոր դատախազությանը դիմել դատարան՝ պետական շահերի պաշտպանությունն առավել արդյունավետորեն իրականացնելու համար: Իր հերթին, ՀՀ գլխավոր դատախազությունը, օգտվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված լիազորությունից, 2025 թվականի հուլիսի 4-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Ընկերության՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին: Ընդ որում, հայցի հիմքերը և հիմնավորումներն ըստ էության հանգում են կողմերի ազատ կամահայտնությամբ մասնավոր-իրավական հարաբերություններում ստանձնած պայմանագրային պարտավորությունն Ընկերության կողմից չկատարելուն:

Հետևաբար՝ ՀՀ գլխավոր դատախազության ներկայացրած հայցի շրջանակներում առկա մասնավոր-իրավական բնույթ ունեցող վեճը հանրային իրավահարաբերություններից չբխելու, բայց միևնույն ժամանակ հանրային շահի իրացման կապակցությամբ՝ պետության գույքային շահերի պաշտպանության նպատակով ծավալված լինելու պայմաններում ենթակա է քննության հակակոռուպցիոն դատարանում:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0199/02/25 (ՎԴ/10691/05/25) գործն ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայցի ընդդեմ Ընկերության՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, ՀՀ գլխավոր դատախազության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՀԿԴ/0199/02/25 (ՎԴ/10691/05/25) գործը ենթակա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՀԿԴ/0199/02/25 (ՎԴ/10691/05/25) գործն ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայցի ընդդեմ «Լոկալ Դիվելոփերզ» ՍՊԸ-ի՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ ՔՐԻՍՏԻՆԵ
ՄԿՈՅԱՆ